ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ՊԼԱՏԻՆԻՈՒՄ ՍԹՈՈՒՆ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի Գոռավան բնակավայրի վարչական տարածքի Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի փակման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտի վերաբերյալ առաջին քննարկում /1-ին լսում/ :

Վեդի համայնք Գոռավան բնակավայր: **14.01.2025 թ.**

2025 թվականի հունվարի **14**-ին ժամը **15:00**-ին ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի Գոռավան բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում /գյուղ Գոռավան, Գևորգ Մարզպետունի 12/ տեղի ունեցավ **«ՊԼԱՏԻՆԻՈՒՄ ՍԹՈՈՒՆ»** ՓԲ ընկերության /այսուհետ նաև՝ Ընկերություն/ կողմից ներկայացված ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի Գոռավան բնակավայրի Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի փակման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտի վերաբերյալ առաջին հանրային քննարկում **/1**-ին լսում/:

Հանրային քննարկմանը մասնակցում էին ՀՀ Արարատի մարզի Վեդու համայնքապետարանի աշխատակազմի Գյուղատնտեսության և Բնապահպանության բաժնի պետ՝ Շ. Բաքոյանը, համայնքապետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ներկայացուցիչներ, Գոռավան բնակավայրի վարչական ղեկավար՝ Դ. Ավետիսյանը, գյուղի բնակիչներ, Ընկերության հանքի վարիչ՝ Վարդան Եղյանը, Ընկերության բնապահպանական փորձագետ՝ Զարուհի Զուռնաչյանը և Ընկերության այլ ներկայացուցիչներ:

Հանրային քննարկումը /լսումը/ բացեց և խոսքով հանդես եկավ Վեդու համայնքապետարանի աշխատակազմի Գյուղատնտեսության և Բնապահպանության բաժնի պետ՝ Շ. Բաքոյանը, և հայտնեց, որ ՀՀ կառավարության **19.11.2014**թ. թիվ **1325**-Ն որոշմամբ սահմանված կարգով (այսուհետ նաև՝ Կարգ) կազմակերպվել և իրականացվում է Ընկերության կողմից ներկայացված ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի Գոռավան բնակավայրի Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի փակման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկումը **/1**-ին լսում/:

Ղեկավարվելով Կարգի դրույթներով, Վեդի համայնքի ղեկավարի կողմից հանրային քննարկումների պատասխանատու է նշանակվել Վեդու համայնքապետարանի աշխատակազմի Գյուղատնտեսության և Բնապահպանության բաժնի պետ՝ Շ. Բաքոյանը և խոսքը փոխանցեց Ընկերությանը:

Ելույթ ունեցավ Ընկերության բնապահպանական փորձագետ՝ Զարուհի Զուռնաչյանը, վերջինս ներկայացրեց հանքավայրի փակման աշխատանքների վերաբերող հարցեր, որից *հետո անցան քննարկման փուլին:*

Վեդու համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Շ. Բաքոյանը հարցեր ուղղեց Ընկերության ներկայացուցիչներին՝

1. Ընկերությունը փակվելու է արդյոք 2-ու տարուց թե՞ ոչ .

2. Ռեկուլտիվացիա լինելու է արդյոք թե՞ ոչ.

Հարցերին պատասխանեց Ընկերության բնապահպանական փորձագետ՝ Զարուհի Զուտնաչյանը, հայտնելով, որ ընկերությանը հատկացված տարածքում պաշարները լրացուցիչ պետք է գնահատվեն և պաշարների սպառումից հետո կնախատեսվի ռեկուլտիվացիա :

Հաջորդիվ համայնքապետարանի աշխատակազմի Գյուղատնտեսության և Բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ՝ Սիմոն Կարապետյանը հարցեր ուղղեց Ընկերության ներկայացուցչին՝

1. Հանքի շահագործվող մակերեսը որքան է կազմում.
2. Կուտակված քարակույտերը Ձեր տարածքում են արդյոք թե՞ ոչ.

Հարցերին պատասխանեց Ընկերության բնապահպանական փորձագետ՝ Զարուհի Զուտնաչյանը, որ Ընկերությանը տրամադրված հողի մակերեսը կազմում է 3.8 հա.,իսկ քարակույտերը գտնվում են իրենց տարածքում և մշակվելու են:

Նախագահողը հարցրեց, թե արդյո՞ք ազդակիր Վեղի համայնքի բնակիչների կողմից կան հարցեր, թե՞ ոչ: Հաշվի առնելով լսարանի դիրքորոշումը՝ հայտարարեց լսման ավարտ:

Կից ներկայացվում է մասնակիցների ցանկը՝ 1 թերթ և հանրային քննարկումների էլեկտրոնային կրիչը:

Վարող՝ Գյուղ. և Բնապահ. Բաժնի պետ՝ / / Շ. Բաքոյան

Նախաձեռնող՝ «ՊԼԱՏԻՆԻՈՒՄ ՍԹՈՈՒՆ»
ՓԲԸ-ի հանքի վարիչ՝ / / Վ. Եղյան